ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

30.06.2017 16:45

Հունիսի 30-ին Արցախի Հանրապետության հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները հետազոտող Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փորձագիտական խումբը ներկայացրել է ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ մասնագիտական կարծիքը: 2016 թվականին ձևավորված Պալատի փորձագիտական խումբն ուսումնասիրել և հաշվետվության տեսքով մի գրքույկում է զետեղել Արցախի հիմնախնդրին, ապրիլյան պատերազմից միջազգային իրավական հետևանքներին, Ադրբեջանի կողմից պատմությունը խեղաթյուրելուն միտված քաղաքականությանն առնչվող հիմնահարցեր:

Լրագրողների հետ հանդիպման ընթացքում Փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը նշել է, որ խմբի ստեղծումը պայմանավորված է ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի խաղաղ բնակչության և պաշտպանության բանակի զինվորների նկատմամբ 2016 թվականի ապրիլի 2-ից 5 ն ընկած ժամանակահատվածում կատարված դաժանությունների միջազգային իրավական գնահատական տալու անհրաժեշտությամբ:

Խմբի անդամ փաստաբան Արա Խզմալյանը խոսել է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի մասին՝ ընդգծելով, որ արցախահայության ինքնորոշման իրավունքը վաղուց պատմականորեն հիմնավորված է:

«Հարցերից ամենահինը կապված է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրավական պահանջի հետ: Հանգամանքները, որոնք հիմք են ստեղծում ինքնորոշման համար, կապված են նաև 88-ի թվականի զարգացումների հետ, երբ տեղի են ունեցել Բաքվի, Սումգայիթի ջարդերը, Արցախի էթնիկ զտումները: Սրանք արդեն իսկ իրավական տեսանկյունից հիմնավորել են ինքնորոշման պահանջը, քանի որ այս հանգամանքների ուժով, Արցախի ժողովրդի ինքորոշումն Ադրբեջանի սահմանններում դարձել է անհնար: Ազգությամբ հայի անվտանգությունը անհրատեսական է Ադրբեջանի տարածքում»,- ասել է նա:

Բանախոսները նկատել են, որ ապրիլյան պատերազմից հետո Ադրբեջանում ուժեղացվում է հայատյացության քաղաքականությունը:

Փորձագիտական խմբի անդամ, փաստաբան Տարոն Սիմոնյանը փաստել է.

«Ադրբեջանը, լինելով մի շարք պայմանագրերի կողմ, ստորագրելով ռասիստական քաղաքականության դեմ պայքարի համաձայնագրեր, խախտում է դրանք: Պետությունից պահանջվում է, որ նախաձեռնեն գործողություններ ռասիստական քաղաքականության դեմ, սակայն իրենք ոչ միայն նման քաղաքականություն են վարում, այլև նախաձեռնում են, ինչը բազմաթիվ փաստերով առկա է»:

Նման վարքը բանախոսներն անվանել են Ադրբեջանի պետական քաղաքականության հետևանք, նշելով, որ հայատյաց քաղաքականությունը տարվում է ոչ միայն նախագահի մակարդակով այլ ՀԿ-ների և ՋԼՄ-ների:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը լրագրողներին ասել է, որ հուլիս ամսին ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ մասնագիտական կարծիքը թարգմանվելու է անգլերեն լեզվով և ուղարվելու է միջազգային կառույցներին, Հայաստանում արտերկրյա դեսպանատներին, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի եվրոպական գործընկերներ կառույցներին:

Բեռնել զեկույցը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Ամալյա Էլիբեգովա
Արա Խզմալյան
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA





Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })